տանի մէջ, գլխաւորապէս Սպահան, Համա-
տան, Շիրազ, Թէհրան եւ այլ քաղաքներում,
եւ որոնց ծագումն աւելի մօտ գաղթականու-
թեան արդիւնք է։ Այդ Հայերը գաղթեցին
Հայաստանից Պարսկաստան ԺԷ. դարում՝ մեծն
Շահաբբասի թագաւորութեան ժամանակ եւ
նրա բռնակալ հրամանով, մինչդեռ Ատրպա-
տականի կամ բուն Պարսկահայքի մէջ գտնուած
Հայերը շատ հին ժամանակից ի վեր բնակուել
են այդ երկրում, եւ ամբողջ դարերի ընթաց-
քում ենթակայ են եղել շատ աղէտների եւ
տառապանքի։ Ատրպատականի մէջ եղած քա-
ղաքները — Թաւրէզ, Մարանդ, Ուրմիա, Խոյ,
Մարաղա, Սալմաս դեռ պատմական ամենահին
ժամանակում յայտնի են եղել իբրեւ բազմա-
մարդ հայ քաղաքներ. այսպէս գիտենք, որ
Քրիստոսի երկոտասան առաքեալներից մինը
Յուդա կամ Թադէոս՝ Հայաստան եկաւ եւ այդ-
տեղ մեռնելով, թաղուեց Որմի քաղաքում։
ԺԵ. դարում՝ Լենկթիմուրի արշաւանքից յետ-
ոյ, երբ յայտնուեց բռնակալ Յուսուփ ամի-
րան, որ Հայաստանն արեան ծով դարձրեց,
Թովմաս Մեծոբեցի ականատես պատմագրի
վկայութեան համեմատ, Ատրպատականում
Հայերի մեծ բազմութիւն կոտորուեց, օրինակ՝
1425 թուին Յուսուփի որդի Աքանտարը՝ առ-
նելով Որմի քաղաքը, որի բնակիչները կէսից
աւելի Հայ էին, նոյն Թովմաս Մեծոբեցու ասե-
լով, կոտորեց բոլոր Հայերին եւ ոչ մի հատ
եւս թողեց, բաց ի մանուկներից եւ աղջիկնե-